

քրիս» (ՂԿ. ԺԴ, 12): Արդ՝ Տաթեւացւոյն յիշեալ խօսքն առնելու ենք նոյն իսկ տոհմային սովորութեան մասին, որ արդարեւ շատ հին է: Մեծն Ներսէս՝ Հայր մարդպետի, որ ցերեկ հիւր եկած էր իրեն, «հրաման տայր... ձաշ պատրաստել» (Փաւս. 114): Նոյնպէս Խաղ օր մը «դընէր ձաշ» անակնկալ հիւրոց, որոնք ուտելէ վերջ մեկնեցան լուսով (նոյն, 108): Գայլ վահան հրամայեց «ձաշ առնել» Միհրանայ, եւ ցերեկ էր (Մամ. 24): Եւ Կիրակոս «ձաշ» կ'անուանէ նոյն պահուն տրուած կերակուր մը (147):

Գ. Թէ որպիսի՛ էր Հայոց սովորական ճաշը, յօրինուածն ու եղանակը, ոչինչ կայ գրուած մեր մատենագրութեան մէջ: Յիշեալ չորս օրինակներն ալ հացկերոյթներ են, որոց մասին առանձին պիտի խօսինք, եւ ոչ պարզ ճաշեր: Այսքան սակայն կրնանք ըսել՝ որ հասարակ ճաշն որ եւ է ուշադիր պատրաստութենէ եւ կարեւորութենէ զուրկ էր, ըստ որում աննշան կ'անցնէր այն ուրիշ ազգաց քով ալ (Գար. Ա, 1272): Զբաղանաց ու ցրման այդ ժամուն՝ ափ յափոյ եւ ուր որ պատահէր՝ կը փութային զոհացնել ստամոքսը, վերըստին իրենց գործին ձեռնարկելու համար: